

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԺԵ. ՏԱՐԻ 2001

«ԱՌ» ՆԱԽԴԻՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐԻ ՄԷՋ
ԵՒ ՆԵՐԳՈՅԱԿԱՆԸ՝ ՈՐՊԷՍ ՈՒՐՈՅՆ ՀՈԼՈՎ

Հ. Պօղոս Գոճանեան

Դասական գրաբարի մինչեւ օրս լոյս տեսած լաւագոյն քերականութիւններն անգամ, նախդիրներու գործածութեան մէջ, ունին բաւական անորոշութիւններ, եւ նոյնիսկ սխալներ:

Գլխաւոր պատճառը այն է, որ ձեռագիրներուն մէջ գրչի բազմաթիւ խանգարումներ կան, յատկապէս՝ նախդիրներու կապակցութեամբ, եւ կատարուած քննական հրատարակութիւններն ալ չեն յաջողած այդ սխալները սրբագրել: Ներկայ աշխատութեանս մէջ շատ ուշադիր եւ երկարատեւ քննութիւններով փորձեցի յստակեցնել խնդրառութեան մէջ գործածուած խառնակ ձեւերը եւ ճշդել անոնց համապատասխան քերականական օրէնքները:

Ծանօթ է, որ նախդիրներու մէջ ամէնէն բարդ գործածութիւնը ունի առ նախդիրը, այստեղ են գլխաւորաբար անորոշութիւնները, եւ այդ կը կազմէ յօդուածիս նիւթը:

Ներկայ ուսումնասիրութեանս ընթացքին աչքի առաջ ունեցած եմ չորս լաւագոյն քերականական աշխատութիւններ,

որոնք հանգամանօրէն զբաղած են գրաբարի նախդիրներով: Ասոնք են՝

1) Հ. Վրթանէս Չալըխեան – Հ. Արսէն Այտընեան՝ Քերականութիւն Հայկազնեան Լեզուի, Վիեննա, 1885.

2) Ա. Մ. Գարագաշեան՝ Դպրութիւն կամ Նոր Քերականութիւն Հայերէն, 9-րդ տպ., 1891, Կ. Պոլիս.

3) Ա. Ա. Աբրահամեան՝ Գրաբարի Ձեռնարկ, 4-րդ հրատ., 1976, Երեւան.

4) Martiros Minassian, *Emplois des Prépositions en Arménien Classique*, 1981, Venise-St. Lazare.

Յօդուածիս մէջ նախ պիտի քննարկենք առ նախդիրի գործածութեան վիճելի հարցերը, յետոյ ներգոյականը պիտի ներկայացնենք որպէս ուրոյն հոլով եւ ամէնէն վերջ պիտի տանք առ նախդիրի գործածութեան ընդհանուր պատկերը:

I. «Առ» նախդիրի գործածութեան մէջ վիճելի հարցեր

Ա) Քննարկումի իբր առաջին կէտ կ'առնենք առ նախդիրի գործածութիւնը դադարում արտայայտող բայերու հետ՝

տեղական քով նշանակութեամբ:

Այդ իմաստով Չալըխեան-Այտընեան (էջ 140) եւ Գարազաշեան (էջ 162) առ նախդիրի գործածութեան համար յստակ կը զանազանեն, եզակի՝ առ + տրական, իսկ յոգնակի՝ առ + հայցական, եւ առանձին ես դերանունին համար նոյնպէս՝ առ+հայցական: Համապատասխան օրինակներն են՝

Եզակի՝ Նաւք կային առ ծովակին, Նստէր առ դրանն, էին առ նմա:

Յոգնակի՝ Եգիտ առ ձկնորսս, նստէր առ ոտս նորա:

Ես՝ Եկաց առ իս:

Բայց ո՛չ Չալըխեան-Այտընեան, ո՛չ ալ Գարազաշեան կը յիշեն Ո հոլովումի (գետ, գետոյ, գետոց) պարագան, որ, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, եզակի ալ առ+հայցական կ'ուզէ:

Նոյնպէս չեն յիշեր ՈԱ հոլովումը (տեղի, տեղոյ, տեղեաց), որ իր յատուկ ձեւը ունի՝ առ+«ոջ» վերջաւորութեամբ:

Դարձեալ, հակառակ նախապէս եզակի եւ յոգնակի գործածութեան տարբերութիւնը շեշտելուն, Չալըխեան-Այտընեան (էջ 143) կը դնէ նաեւ ընդհանուր առ+հայցական, եւ իբր օրինակ կը յիշէ՝ Առ եզր, առ ափն ծովուն:

Այս վերջինի մասին պէտք է անդրադառնանք յետոյ:

Աբրահամեան (էջ 229, 2) առ նախդիրի նոյն իմաստով գործածութեան համար կը դնէ՝ առ+տրական, ընդհանուր, առանց յիշելու եզակին ու յոգնակին: Նման սահմանում ճիշդ չէ, որովհետեւ տրականով կը գործածուի միայն եզակին, ո՛չ յոգնակին: Մէջբերած օրինակները եզակի են:

Դարձեալ նոյն իմաստով (էջ 230, 2) կը դնէ ընդհանուր՝ առ+հայցական, ա-

ռանց մասնաւոր բացատրութեան: Օրինակները եզակի ու յոգնակի են, բայց եզակի են միայն՝ Առ ափն ծովուն, Առ ափն Տղմուտ գետոյն, այսինքն՝ Չալըխեան-Այտընեանի օրինակը:

Աբրահամեան ալ չի յիշեր Ո հոլովումի, ինչպէս նաեւ ՈԱ հոլովումի տարբեր գործածութիւնը:

Մինասեան (էջ 19) կը զանազանէ՝ առ+տրական՝ եզակի: Կը յիշէ նաեւ, որ Ո հոլովումը կ'ուզէ՝ առ+հայցական, եւ վերջինիս իբր օրինակ կու տայ՝ Բանն էր առ Աստուած (Յովհ. Ա 1):

Հակառակ ասոր, ինքն ալ (էջ 11) կը դնէ նաեւ ընդհանուր՝ առ+հայցական:

Օրինակները եզակի եւ յոգնակի են, բայց եզակի են միայն՝ Առ իս, Առ Աստուած: Ասոր նոյնպէս պիտի անդրադառնանք յետոյ:

Մինասեան ալ չի յիշեր ՈԱ հոլովումի տարբեր գործածութիւնը:

Այս մարզի մէջ մեր ուսումնասիրութիւնները, մանրամասն քննութիւններով ու համեմատութիւններով, տուին յստակ պատկեր մը:

Ուստի, դադարում արտայայտող բայերու հետ, տեղական քով նշանակութեամբ, առ նախդիրի համար կրնամ կատարել հետեւեալ ճշգրտումները:

1) Սխալ է ընդհանուր՝ տրական կամ հայցական, օրէնք դնել եզակիի եւ յոգնակիի համար, որովհետեւ անոնց գործածութիւնը կը տարբերի:

2) Յոգնակի գոյականներու կամ դերանուններու հետ կը գործածուի միայն եւ առանց բացառութեան՝ առ+հայցական: Օրինակներ՝

«Հեղի քահանայ նստէր աթոռով առ սեամս տաճարին» (Ա Թագ. Ա 9), «Թաղեցին զնա առ հարս իւր» (Դ Թագ. ԺԵ

7), «Թռչունք առ իւրեանց նմանիսն դարբն» (Սիր. Իէ 7):

3) Եզակիի մէջ, բացի Ո եւ ՈԱ հոլովումներէն, կը գործածուի՝ առ + տրական. օրինակ՝ «Պետրոս առ դրանն կայ» (Գործ. ԺԲ 14), «Տապար առ արմին ծառոց դնի» (Մատթ. Գ 10), «Առ նմա ագան այն օր» (Յովհ. Ա 39):

4) ա) Ո հոլովումը նաեւ եզակիի համար կ'ուզէ՝ առ+հայցական:

Օրինակ՝ «Եկաց առ սեղանն» (-Յայտ. Ը 3), «Եդ զնա առ որմ հաստատեալ երկաթով» (Իմաստ. ԺԳ 15), «Երթեալ նստէր մօտ առ դին» (Փաւ. Բուզ. 102):

բ) Կանոնաւոր այդ ձեւին քով կը գործածուի նաեւ տրականի նմանող ձեւ մը: Օրինակ՝ «Նստաւ առ ջրհորի միում» (Ել. Բ 15), «Առիւծն կայր առ մարմնին» (Գ Թագ. ԺԳ 24) եւն.:

5) ՈԱ հոլովումը ունի իր յատուկ գործածութիւնը՝ առ+«ոջ»:

Օրինակ՝ «Բնակեցաւ առ կաղնուղն Մամբրէի» (Մն. ԺԳ 18), «Տնկեն զնա առ ընտանի թղենուղ» (Բարսեղ, Վեց. 98):

6) Ես՝ անձնական դերանունի առաջին դէմքը, իբր միակը, բացառաբար կը գործածէ նոյնպէս՝ առ+հայցական: Օրինակ՝ «Կան առ իս» (Մատթ. ԺԵ 32):

Երկրորդ դէմքը՝ Առ քեզ, թէ՛ տրական, թէ՛ հայցական կրնայ ըլլալ:

Յառաջ բերուած այս թիւ 1-6 կէտերը, կու տան յստակ, վստահելի եւ ամբողջական պատկերը առ նախդիրի գործածութեան՝ քով (դադարում) նշանակութեամբ: Անոնք միաժամանակ, որպէս պատասխան վերոյիշեալ քերականութիւններուն մէջ ըստածներուն, կը յստակեցնեն անոնց անորոշութիւնները եւ կը լրացնեն պակասները:

Բայց վերը նշեցինք երկու կէտ, որ դեռ կարօտ են լուսաբանութեան:

Առաջին՝ Չալըխեան-Այտընեան քերականութիւնը, հակառակ որ եզակիի համար տրական եւ յոգնակիի համար հայցական հոլով կ'ընդունի, ինչպէս ըսինք, յետոյ կը դնէ նաեւ ընդհանուր՝ առ+հայցական, եւ իբր օրինակ կը յիշէ (եզակի)՝ Առ եզր, Առ ափն ծովուն:

Նոյնը կը կրկնէ նաեւ Աբրահամեան նոյն օրինակով:

Մինասեան ալ, հակառակ որ եզակիի համար առ+տրական կ'ընդունի եւ կը ճանչնայ նաեւ Ո հոլովումի տարբերութիւնը (առ+հայցական), ուրիշ տեղ կը դնէ ընդհանուր առ+հայցական, եւ իբր եզակի օրինակ կը յիշէ՝ Առ իս, Առ Աստուած:

Անմիջապէս ըսենք, որ Առ իս իբր բացառութիւն, ինչպէս վերը յիշեցինք, չի կրնար օրէնքի մը օրինակ ծառայել:

Իսկ առ Աստուած Ո հոլովումին կը պատկանի եւ իբրեւ այդպիսի՝ ճիշդ է:

Գալով առ եզր գետոյն կամ ծովուն եւ առ ափն գետոյն կամ ծովուն օրինակներուն՝ պէտք է ըսեմ, որ Սուրբ Գրքի մէջ, ուր անոնք շատ անգամ գործածուած են, գրեթէ այնքան անգամ կը հանդիպինք՝ առ եզր եւ առ ափն, որչափ նաեւ՝ առ եզր եւ առ ափին՝ ձեւերուն: Օրինակները շատ են. աւելորդ կը համարիմ մէջբերել:

Հետեւաբար, առ եզր եւ առ ափն այստեղ կարելի է գրչի սխալ համարիլ եւ ուղղել՝ առ եզեր, առ ափին: Շատ դիւրին էր ընել նման սխալ մը, որ միայն մէկ գրի տարբերութիւն ունի: Ասոր փաստը ունինք արդէն պարզ ներգոյականի պարագային ալ, ուր կը գտնենք յեզր, յափն, փոխանակ՝ յեզեր, յափին. «Կայր Յիսուս յեզր ծովուն» (Յովհ. ԻԱ 4), «էջ

լուանալ յեզր գետոյն» (Տովբ. Զ 2), «Առաջապահք ... յափն ծովու կացցեն» (Եգեկ. Իէ 29):

Բայց կայ երկրորդ լուծում մը: Ծանօթ երեւոյթ է, որ երբեմն սեռական հոլովի մը (յատկացուցիչի մը) առջեւ գործածուած գոյականը փոխանակ ի+տրականի, դրուած է՝ ի+հայցական. օրինակ՝ «Հողմ հարաւոյ խորտակեաց զքեզ ի սիրտ ծովու» (Եգեկ. Իէ 26), փխնկ. ի սրտի ծովու. կամ՝ «Որպէս էր Յովնան ի փոր կիտին... նոյնպէս եղիցի եւ Որդի մարդոյ ի սիրտ երկրի» (Մատթ. ԺԲ 40), փխնկ. ի սրտի երկրի: (Ի փոր կիտին՝ ճիշդ է, քանի փոր՝ Ո հոլովումին կը պատկանի (թէեւ ի փորի ալ կարելի էր ըսել):

Ուրեմն, ի սրտի երկրի, ի սրտի ծովու՝ պարզապէս երկու սեռականաձեւ վերջաւորութիւններուն համար (արտասանելու որոշ դժուարութեան պատճառով) կրնան դարձած ըլլալ՝ ի սիրտ երկրի, ի սիրտ ծովու:

Նոյնը կ'արժէ վերը յիշուածներուն՝ առ եզր գետոյն, առ ափն ծովու, փոխանակ՝ առ եզր գետոյն, առ ափին ծովու:

Ըսուածներէն կը հետեւի, որ օրէնքը կը պահանջէ տրական՝ առ եզր գետոյն, առ ափին ծովու (քանի այդ ձեւերն ալ գործածուած են հակառակ արտասանելու դժուարութեան), եւ միայն երկու սեռականաձեւ վերջաւորութիւններուն պատճառով (արտասանելու բնական ծուլութեամբ) դրուած է նաեւ հայցական: Շատ շատ, որպէս մասնաւոր դէպք, կարելի է այդ բացառութիւն համարիլ:

Ուստի, սխալ է իբր օրէնք դնել եզակիի մէջ՝ առ+հայցական՝ վերոյիշեալ իմաստով, բացի Ո հոլովումի պարագային, ինչպէս վերը յիշած ենք:

Մինչեւ այստեղ առ նախդիրի գործածութեան համար մեր ըսածները որոշ են եւ յստակ, բայց միաժամանակ՝ բաւարար:

կան բարդ: Ինչո՞ւ նոյն նախդիրը նոյն իմաստը տալու համար այնքան տարբեր հոլովներով ու ձեւերով պիտի գործածուի: Քննենք:

Վերը (թիւ 4բ) յիշեցինք, որ Ո հոլովումը, բացի իր կանոնաւոր ձեւէն, ունի նաեւ տրականի նմանող ձեւ մը՝ առ մարմինն, առ ջրհորի միում, եւն.:

Տրականի նմանող ըսինք, ոչ թէ տրական: Մարմնի, ջրհորի, եւն. տրական չեն. անոնք Ո հոլովումին կը պատկանին եւ անոնց տրականը կ'ըլլայ՝ միայն՝ մարմնոյ, ջրհորոյ: Եթէ ոչ-դասական գրաբարի մէջ հոլովական տարբեր ձեւերու հանդիպինք, անոնք կարելի է որ պէս փաստ գործածել դասական գրաբարի համար:

Ինչպէս ծանօթ է՝ ի մարմնի, ի ջրհորի, եւն. Ո հոլովումի պատկանող գոյականներու ներգոյական ուրիշ մէկ ձեւն է, փոխանակ՝ ի մարմին, ի ջրհոր՝ կանոնաւոր ձեւին: Ծիշդ նոյն այդ ներգոյական ձեւը կը տեսնենք վերը՝ առ նախդիրով գործածուած գոյականներուն վրայ՝ Առ մարմնին, առ ջրհորին:

Դարձեալ՝ վերը (թիւ 5) ըսինք, որ ՈԱ հոլովումը ունի իր յատուկ -ոջ վերջաւորութիւնը՝ առ կաղնուջ, առ թզենուջ:

Բոլորովին սխալ է, կաղնուջ, թզենուջ, եւն. ձեւերը տրական համարիլ. անոնք երբէք իբր տրական չեն գործածուիր: Անիմաստ է, ինչ որ կ'ըսեն որոշ քերականներ, թէ այդ ձեւերը տրական հոլով են, բայց կը գործածուին միայն ներգոյական կազմելու համար ի նախդիրով:

ՈԱ հոլովումին մէջ այդ -ոջ վերջաւորութիւնը միայն ներգոյականի յատուկ է: Ուրեմն, առ կաղնուջ, առ թզենուջ ձեւերուն մէջ նորէն գործ ունինք ներգոյա-

կանի հետ, ուր պարզապէս ի նախդիրին տեղ դրուած է՝ առ:

Գիտենք, որ ներգոյականի համար յոգնակիի մէջ կը գործածուի՝ ի+հայցական, իսկ եզակի՝ Ո հոլովումը կը գործածէ՝ ի+հայցական կամ տրականի նմանող երկրորդ ձեւ մը, ՈԱ հոլովումը ունի իր յատուկ ձեւը՝ ի+«-ոջ», իսկ միւս հոլովումները առանց բացառութեան կը գործածեն՝ ի+տրական: Եւ անձնական դերանուններէն միայն եւ-ը՝ ի (յ)+հայցական, այսինքն՝ յիս:

Անմիջապէս կը տեսնենք, որ բոլորովին նոյն հոլովներն ու ձեւերն են, որ վերը, իբր օրէնք, յիշեցինք առ նախդիրի գործածութեան համար:

Ուստի կը հետեւցնենք, որ ոչ միայն ՈԱ եւ Ո հոլովումներու մէջ, այլ վերը առ նախդիրի հետ գործածուած բոլոր ձեւերը պարզապէս ներգոյական են:

Իբր եզրակացութիւն՝ վերը յիշուած թիւ 1-6 կէտերու կանոնները կ'ամփօփենք միայն մէկ կէտի կամ կանոնի մէջ հետեւեալ ձեւով՝

Դադարում արտայայտող բայերու հետ տեղական քով իմաստը տալու համար կը գործածուի պարզապէս՝ առ+ձերգոյական:

Բ) Առ նախդիրի գործածութիւնը որպէս պատճառ արտայայտող

Առ նախդիրը, ինչպէս ծանօթ է, ընդհանրապէս հոգեկան վիճակ, կիրք, զգացում, եւն. արտայայտող վերացական գոյականի մը հետ գործողութեան մը պատճառը կը յայտնէ. այսպէս՝ Առ վշտին ոչ բանայ զբերան իւր (վշտին պատճառով), Առ սէր քո առնեմ զայս (քու սիրոյդ համար), եւն.:

Զալըխեան-Այտընեան (էջ 137, 143) այդ իմաստով կը դնէ՝ առ+սեռական կամ

առ+հայցական՝ ընդհանուր, առանց զանազանելու ելակին ու յոգնակին: Օրինակները եզակի եւ յոգնակի են.

Սեռական՝ առ նախանձու, առ երկիւղի, առ ցաւոց*, առ ամօթոյ*, եւն.:

Հայցական՝ առ ցաւս, առ ատել, առ նախանձ*, եւն.:

Յառաջ բերուած օրինակներուն մէջ կան նաեւ վիճելի ձեւեր, որոնց աստղանիշ կը դնենք եւ յետոյ առանձին քննութեան պիտի ենթարկենք:

Գարագաշեան ալ (էջ 162) նոյնը կ'ընդունի. օրինակները՝

Առ նախանձու մատնեցին զնա, Առ սէր քո արարի զայս, Առ չգիտանս եկեր, Առ իմոյ յիշատակի*, Առ հոգալ իւրում, եւն.:

Աբրահամեան (էջ 229) կը դնէ՝ առ+տրական՝ ընդհանուր, առանց յիշելու եզակի ու յոգնակի: Օրինակները միայն եզակի են. Առ երկիւղի, Առ ձերում անմտութեան, եւն.:

Դարձեալ (էջ 232)՝ կը դնէ ընդհանուր՝ առ կամ առ ի+հայցական:

Օրինակները եզակի եւ յոգնակի են. Առ ի չգիտանս* եկեր, Առ չհանդուրժել, Առ ցաւս ճչել, Առ սէր, Առ նախանձ*, եւն.:

Մինասեան (էջ 17) կը զանազանէ՝ առ+տրական՝ եզակի:

Օրինակներ՝ Առ իւրում բարերարութեանն ...ներեաց նմա, Առ նախանձու մատնեցին զնա, Առ ահին աղաղակեցին:

Հակառակ ասոր (էջ 16), կը դնէ նաեւ ընդհանուր՝ առ+հայցական:

Օրինակները եզակի եւ յոգնակի են. Առ ատել զնոսա, Առ սէր քո արարի զկամս քո, Զայրանային զուարակքն առ ցաւս խարանացն:

Նախ՝ ունինք քանի մը դիտողու-

թիւններ:

Չալըխեան-Այտընեան եւ Գարագաշեան կը դնեն՝ առ+սեռական: Ասիկա հիներուն քով ընդհանրապէս ընդունուած կանոնն էր. նոյնը ունի նաեւ «Նոր Բազիրք Հայկազեան Լեզուի», Վենետիկ, 1836-1937: Գոյականներու սեռականի եւ տրականի նոյնութիւնը, ինչպէս նաեւ գործածուած որոշ տեղիքներ («առ իմոյ յիշատակի», «առ ամօթոյ ձերոյ», եւն.) այդ շփոթութեան պատճառ եղած են: Նոր քերականներ, Հանդիպելով անկանով գործածուած ձեւերու («առ բարութեան իւրում», «առ քաղցի իւրում», եւն.), ճշդեցին, որ տրական պէտք է ըսել, ոչ թէ սեռական:

Միայն Մինասեանն է, ան ալ ոչ միշտ, որ կը յիշէ եզակի եւ յոգնակի գոյականներու գործածութեան տարբերութիւնը: Միւս հեղինակները ընդհանուր կը խօսին, առանց զանազանելու եզակին ու յոգնակին: Բայց ուշադիր ընթերցողը անմիջապէս կ'անդրադառնայ, որ երբ իբր կանոն կը դնեն՝ առ+տրական (սեռական), կը բերեն միայն եզակի գոյականով օրինակներ. իսկ երբ դնեն՝ առ+հայցական, կը գործածեն կամ յոգնակի գոյականով օրինակներ, կամ միայն Ո հոլովումի պատկանող եզակիներ (գոյական կամ անորոշ դերբայ):

Մեր քննութիւնները այս նիւթի կապակցութեամբ ալ տուին հետեւեալ յստակ կանոնները՝

1) Կարելի է ընդհանուր՝ տրական կամ հայցական, որպէս օրէնք դնել եզակիի եւ յոգնակիի համար, որովհետեւ անոնք տարբեր գործածութիւն ունին:

2) Յոգնակի գոյականներու հետ, առանց բացառութեան կը գործածուի՝ առ+հայցական. օրինակներ՝

«Աղաղակեսջիք առ ցաւս» (Ես. ԿԵ

14), «Տէր մատնեաց զնա առ մեղս մեր» (Ես. ԾԳ 6):

3) Եզակի գոյականներու հետ, բացի Ո հոլովումէն, կը գործածուի միշտ՝ առ+տրական. օրինակներ՝

«Առ վշտին ոչ բանայ զբերան իւր» (Ես. ԾԳ 7), «Ոմանք առ նախանձու եւ հակառակութեան զՔրիստոս քարոզեն եւ ոմանք՝ ի սիրոյ» (Փլպ. Ա 15), «Ձանձն չկամէր (չհամարէր) արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում» (Փաւ. Բուզ. 59):

4) Միայն Ո հոլովումի պատկանող բառերու հետ նաեւ եզակիի մէջ կը գործածուի՝ առ+հայցական. օրինակներ՝

«Առ սէր քո արարի զկամս քո ի վերայ Բաբելոնի» (Եսթ. ԽԸ 14), «Առ գութ տիրասիրութեանն, զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին» (Փաւ. Բուզ. 170), «Առ ատել զնոսա Տեառն եհան զնոսա կոտորել (Բ Օր. Թ 28):

(Դժբախտաբար չկան ՈԱ հոլովումի պատկանող վերացական բառեր, որ կարելի ըլլայ առ նախդիրի հետ, վերոյիշեալ իմաստով գործածել):

Ըսուածներէն արդէն յայտնի է, որ այստեղ գործածուած ձեւերը ո՛չ տրական են, ո՛չ ալ հայցական, այլ նորէն՝ ներգոյական: Ասոր անհերքելի փաստը կուտայ մանաւանդ հետեւեալ խօսքը՝ «Ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի» (Մատթ. Զ 27): Որովհետեւ առ հոգալ իւրում ո՛չ տրական, ո՛չ ալ հայցական կրնայ ըլլալ, այլ միայն՝ ներգոյական:

Եւ եթէ նոյնիսկ ընդունէինք, որ առ նախդիրը երբեմն տրականով, երբեմն ալ հայցականով կը գործածուի, անկարելի է սակայն մտածել, որ գոյականը (կամ անորոշ դերբայը) եւ անոր կապուած ածականը կրնան միաժամանակ տարբեր հո-

լով դրուել, մէկը՝ հայցական, միւսը՝ տրական, ինչպէս կը տեսնենք այստեղ՝ հոգալ եւ իւրում ձեւերու մէջ:

Եզրակացութիւնս յստակ է. ինչպէս տեղական քով իմաստով, նոյնպէս պատճառ արտայայտող նշանակութեամբ՝ կը գործածուի պարզապէս՝ առ+անդոյական:

Եւ բնաւ զարմանալի է, որ նոյն նախդիրը նոյն հոլովի հետ գործածուի կրկին նշանակութեամբ, որովհետեւ այդ երկու նշանակութիւնները կապուած են իրարու՝ մէկը միւսէն կախում ունենալով: Տեղական նշանակութիւնը բնականաբար նախնականն է. անկէ յառաջ եկած է նաեւ պատճառի նշանակութիւնը:

Օրինակի համար «Առ ցաւս իւր ճչիցէ» (Ես. ԻԶ 17), կը նշանակէ՝ ցաւերուն պատճառով կամ ցաւէն կը ճչայ. բայց նախնական իմաստն էր անշուշտ՝ ցաւերուն մէջ, ցաւերուն հետ ըլլալով՝ կը ճչայ: Ասիկա աւելի լաւ կը տեսնուի յաջորդ օրինակին մէջ. «Մի՛ յապաղիցես դառնալ ի մեղաց առ Տէր, զի մի՛ առ մեղս քո սատակիցիս» (Սիր. Ե 8-9), ուր առ մեղս քո աւելի մեղքերու հետ իմաստը ունի, քան՝ մեղքերու պատճառով: Նոյնպէս՝ «Առ իւրում բարերարութեանն ... ներեաց նմա» (Եզնիկ, 154)՝ կրնամ թարգմանել՝ իր բարերարութեան պատճառով կամ՝ իր բարերարութեամբը ... ներեց անոր:

Այժմ քննենք վերոյիշեալ աստղանիշ ունեցող վիճելի օրինակները:

Միայն Չալըխեան-Այտընեանն է, որ ունի առ+սեռական/տրական օրինակ մը յոգնակիով՝ «առ ցաւոց»: Ատիկա արդիւնքն է անոր, որ ինք որպէս կանոն կը դնէ՝ առ+սեռական: Սակայն ոեւէ տեղ չենք հանդիպած յոգնակիի մէջ սեռ/տրակ. այդ ձեւին, այլ ամէն տեղ տեսած ենք միայն՝ «առ ցաւս»:

Գարագաշեան, իբր օրինակ, յիշած է՝ «Չայս արասջիք առ իմոյ յիշատակի» (Ղուկ. ԻԲ 19): Բայց առ իմոյ յիշատակի պատճառ չ'արտայայտեր, այլ նպատակ: Իսկ այդ իմաստով չի գործածուի առ+տրական (կամ ըստ Գարագաշեանի՝ առ+սեռական):

Ընդհանրապէս հիները չեն զանազաներ պատճառ եւ նպատակ արտայայտող ձեւերու տարբերութիւնը: Յայտնի է, որ աշխարհաբարի մէջ միեւնոյն բառը (համար) կը գործածենք թէ՛ պատճառ եւ թէ՛ նպատակ արտայայտելու: Օրինակ՝ երբ ըսեմ՝ Քու սիրոյդ համար կ'ընեմ ասիկա՝ սէրդ պատճառ է. իսկ երբ ըսեմ՝ Ասիկա ըրէք իմ յիշատակիս համար՝ յիշատակս նպատակ է:

Մինասեան (էջ 18) կը յիշէ, որ հայագէտ Անթուան Մէյէ «Շփոթեցնող եւ մութ» կը գտնէ վերոյիշեալ «առ իմոյ յիշատակի» ձեւը, եւ ինք կը փորձէ ուղղել՝ իմոյ սեռականը փոխելով իմում տրականի: Սակայն, ինչպէս ըսինք, այդ խօսքը նպատակ կ'արտայայտէ, ոչ թէ պատճառ. իսկ այդ իմաստով՝ առ+տրական չի գործածուի: Բայց այդ մասին աւելի վերջ:

Աբրահամեան իբր օրինակ կը բերէ՝ «Առ ի չգիտանս եկեր» (Եզնիկ, 49), եւ անոր համաձայն իբր կանոն ալ կը դնէ՝ առ կամ առ ի+հայցական:

Եզնիկի քով այդ առ ի ձեւը յայտնապէս գրչի սխալ է եւ պէտք է ուղղել՝ առ չգիտանս, ինչպէս ունին ուրիշ քերականներ (տե՛ս Գարագաշեանի օրինակը): Առ ի+հայցական, ինչպէս՝ առ ի սփոփանս, առ ի պէտս, եւն., կը գործածուի միայն նպատակ արտայայտելու համար, ոչ թէ պատճառ:

Վերի օրինակներուն մէջ կը տեսնենք՝ «առ նախանձու» եւ «առ նա-

խանձ»՝ կրկին ձեռնարկ: Առաջինը սովորական է, երկրորդը՝ ոչ: Նախանձ՝ չի պատկանիր Ո հոլովումին եւ պէտք է գործածուի հայցականով: Անոր կը հանդիպինք սակայն հետեւեալ ձեւով՝ «Առ հեռ եւ նախանձ ծնգեալ» (Նոր Հայկազեան Բազմաբ. Ա. հատոր, էջ 281): Առ հեռ՝ Ո հոլովումին կը պատկանի եւ ճիշդ գործածուած է: Իսկ նախանձ՝ միայն նախորդին կապուած ըլլալով՝ անոր նմանութեամբ դրուած է նոյնպէս հայցական. այլապէս առանձին ան գործածուած է միշտ տրական ձեւով՝ «առ նախանձու»:

Վերը իբր օրինակ բերուեցաւ նաեւ՝ «առ ամօթոյ»: Ամօթ՝ կը պատկանի Ո հոլովումին եւ սովորական ձեւը պիտի ըլլար՝ առ ամօթ: Բայց մենք տեսանք, որ Ո հոլովումը ունի ներգոյականի ուրիշ ձեւ մըն ալ, ինչպէս՝ առ մարմնին, առ ջրհորին, նաեւ՝ առ ջրհորոյ. «Նստոյց զուգտան առ ջրհորոյ ջրոցն» (Ծն. Ի 11):

Առ ամօթոյ կամ ներգոյականի այդ երկրորդ ձեւն է, կամ, աւելի հաւանաբար, բացառական է՝ առ (յ)ամօթոյ, ինչպէս յետոյ պիտի տեսնենք:

Նոյնպէս առ սիրոյ, առ չժուծալոյ (փոխանակ առ սէր, առ չժուծալ սովորական ձեւերուն), թէեւ կրնան ներգոյականի այդ երկրորդ ձեւով կազմուած ըլլալ, բայց շատ աւելի հաւանական է, որ գրչի սխալ են, եւ պէտք է ուղղել՝ առ ի սիրոյ եւ առ ի չժուծալոյ (բացառական): Ըսածս կ'արժէ մանաւանդ բայերու պարագային:

Գ) Բոլորին կողմէ ընդունուած է, որ առ+նախդիրով բացառական (մէկու մը) կողմէ կամ քովէն իմաստը կ'արտայայտեւ եւ կրնայ գործածուիլ թէ՛ եզակի եւ թէ՛ յոգնակի:

Միայն կ'ուզեմ նկատել տալ, որ այստեղ առ նախդիրը աւելադրուիլն է,

եւ պարզ բացառականն ալ գրեթէ նոյն իմաստը կու տայ:

Օրինակ՝ «Քոյր է իմ առ ի հօրէ եւ ոչ առ ի մօրէ» (Եփրեմ, Ա 55) խօսքը ուրիշ տեղ կը գտնենք պարզ բացառականով՝ «Քոյր է իմ ի հօրէ եւ ոչ ի մօրէ» (Ծն. Ի 11): Տարբերութիւնն է՝ հօր կողմէ, փխնկ՝ հօրմէ:

Յաջորդ խօսքին մէջ կը հանդիպինք երկու ձեւին ալ միաժամանակ՝ «Եղիցի հովանի տուընջեան առ ի սօթոյ եւ ծածկոյթ՝ ի խստութենէ եւ յանձրեաց» (Ոսկ. Ես. 44):

Դ) Ծանօթ է, որ առ+բացառական՝ պատճառ կ'արտայայտէ:

Օրինակ՝ Առ ի չգոյէ կերակրոյ (կերակուր չըլլալուն համար), առ ի ծուլութենէ (ծուլութեան պատճառով), եւն.:

Ընդհանրապէս բոլոր քերականները այստեղ կը դնեն՝ առ+նախդիրով կամ առանց նախդիրի բացառական (այսինքն՝ առ կամ առ ի+բացառական):

Մինասեան (էջ 20) կը դանդաղաբար այդ անորոշութեան համար, բայց ինքն ալ կը մնայ անորոշ:

Իմ քննութիւններս դրական արդիւնք տուին: Բազմաթիւ օրինակներու համեմատութեամբ անդրադարձայ, որ առ կը գործածուի միայն ձայնաւորով սկսող բառերու առջեւ, մինչ սովորական գործածութիւնն է՝ առ ի: Այդ եղաւ լուծման բանալին ոչ միայն այս, այլեւ ուրիշ խնդիրներու համար:

Ուստի, կրնամ հարցը յստակ ներկայացնել հետեւեալ ձեւով՝

1) Օրէնքը կը պահանջէ նախդիրով բացառական եւ կը գործածուի թէ՛ գոյականով, թէ՛ անորոշ դերբայով. օրինակներ՝

«Առ ի չգոյէ հիւթոյ ... չորացաւ» (Մատթ. ԺԳ 5, Ղուկ. Ը 6).

«Բազում չարիք յաշխարհ մտին առ ի սիրոյն ցամաքելոյ» (Ոսկեբ. Մտթ. 256):

Յայտնի է, որ վերը յիշուած (Գ. կէտ)՝ առ+բացառականը՝ կողմէ, քովէն իմաստով եւ այստեղ նոյնը (Գ. կէտ)՝ պատճառ նշանակութեամբ, թէ՛ գործածութեան ձեւին եւ թէ՛ իմաստի տեսակէտէ կապուած են իրարու (ինչպէս նոյնը ըսինք վերը՝ առ+ներգոյականի համար՝ քով եւ պատճառ կրկին իմաստներով): Եւ բնական է, որ բանի մը ծագման վայրը եւ անոր պատճառը իրարմէ կախում ունենան:

Այս պարագան ալ կը պահանջէ նախդիրներու նոյն գործածութիւնը երկուքին համար ալ, այսինքն՝ առ+ի:

2) Ձայնաւորով սկսող բառերու առջեւ ի նախդիրը կ'իյնայ եւ կը մնայ՝ առ: Օրինակ՝ «Առ ոչ ուղիղ հայելոյ կարծեցին եթէ...» (Եզնիկ, 67),

«Ոչ առ արդարութեանց մերոց արկանեմք զգուլթս մեր առաջի քո, այլ վասն բազում զթութեան քո, Տէր» (Դան. Թ 18):

Նախորդ քերականները, որ չէին անդրադարձած ձայնաւորի պատճառով առ նախդիրի այս ձեւ գործածութեան, վերոյիշեալ «Առ արդարութեանց մերոց» ձեւը սխալմամբ տրական կամ սեռական կը կարծէին:

3) Օրէնքը կ'արժէ ոչ միայն եզակիի, այլ նաեւ յոգնակիի համար:

Օրինակ՝ «Ոչ առ ի փափկութեանց եւ յուլութեանց կորոյս զլաւութիւնն» (Ոսկեբ. Մատթ. 558), նոյնպէս վերը (թիւ 2) յիշուածը՝ «Ոչ առ արդարութեանց մերոց...»:

Մինասեան (էջ 21) կ'ըսէ, թէ վերո-

յիշեալ իմաստով ինք միայն եզակի գործածուած գոյականներու հանդիպած է եւ այդպէս ալ կը համարի օրէնքը:

4) Ինչպէս վերը (Գ. կէտ) ըսինք, այստեղ ալ առ նախդիրը շատ անգամ աւելադրուիլն է, եւ պարզ բացառականով ալ կարելի է նոյն իմաստը արտայայտել: Օրինակ՝

«Ոչ եթէ առ ի հարկէ տանջէ զնոսա, այլ կամօք» (Ոսկեբ. Պող. Ա. հտ. 679):

Ուրիշ տեղ՝ «Մի՛ բարիքդ քո ի հարկէ լինիցին, այլ կամաւ» (Փիլիմ. 14):

«Առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ... (Եզնիկ, 67), ուրիշ տեղ՝ «Մեզ հարկ եղեւ ի սիրոյ բարեկամաց եւ յոչ ուղիղ հայելոյ ընդդիմակացն ... մխել ի խնդիր ճարիցս» (Եզնիկ, 22):

Ուշադիր պէտք է ըլլալ, որ թէեւ առ+ներգոյական եւ առ+բացառական երկուքն ալ պատճառ կ'արտայայտեն, բայց վերջինի պարագային առ նախդիրը, իբր աւելադրութիւն, կրնայ նաեւ չգործուիլ, մինչ առաջինին համար առը անհրաժեշտ է:

Ե) Ծանօթ է նոյնպէս, որ առ+բացառական նաեւ նպատակ կ'արտայայտէ.

Օրինակներ՝ Առ ի հաստատութենէ բանիցն (խօսքերը հաստատելու համար), Առ օրինակէ (օրինակ տալու համար կամ իբր օրինակ), Առ ի խրատելոյ (խրատելու համար):

Այստեղ ալ քերականները անորոշ են. Գարագաշեան, Աբրահամեան եւ Մինասեան կը դնեն՝ առ+նախդիրով կամ աննախդիր բացառական:

Չալըխեան-Այսրենեան (էջ 133) անորոշ դերբայի հետ գործածութեան համար կը դնէ նախդիրով բացառական: Իսկ գոյականներու հետ գործածութեան համար նախ (էջ 145) կ'ըսէ՝ առ+նախդիրով կամ

343-2007



աննախդիր բացառական, յետոյ (էջ 147) կը դնէ միայն՝ առօրինակ բացառական:

Այստեղ կրնանք յատկեցնել հետեւեալ կէտերը՝

1) Օրէնքը կը պահանջէ առ + նախդիրով բացառական, եւ այդ կ'արժէ թէ՛ գոյականի եւ թէ՛ անորոշ դերբայի համար: Օրինակներ՝

Գոյականով՝ «Անդ եղին ... առ ի յիշատակէ գոուրսն քարեղէնս» (Յես. ԻԴ 31), «Շատ է գիտել մեզ առ ի փրկութենէ մերմէ զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին Սուրբ, թէ մի է» (Կիւրեղ Ե., Կոչումն, 356):

Անորոշ դերբայով՝ «Կոչի (Յիսուս) ե՛ւ ճանապարհ, առ ի զմոլորութիւնն հալածելոյ, ե՛ւ ճշմարտութիւն, առ ի զստութիւնն եղծանելոյ, ե՛ւ կեանք, առ ի զմահն քակելոյ» (Սեբեր. 9):

2) Միայն ձայնաւորով սկսող բառերու առջեւ ի նախդիրը կ'իյնայ եւ կը մնայ՝ առ: Օրինակներ՝

«Մի՛ առ ականէ ծառայել իբրեւ մարդահաճոյք» (Եփես. 2 6), «Զիոց սանձս ի բերան դնեմք, առ անսալոյ նոցա մեզ» (Յակ. Գ 3):

Առ նախդիրը այս իմաստով շատ գործածուած է ձայնաւորով սկսող գոյականներու հետ, ինչպէս՝ Առ ականէ, առ առակէ, առ օրինակէ, առ եղեռանէ, առ ուսմանէ, եւն.: Հաւանօրէն այդ է պատճառը, որ Չալըխեան-Այտընեան վերջին անգամ (էջ 147) կը դնէ միայն՝ առօրինակ բացառական:

Պէտք է նկատի ունենալ, որ ձեռագիրներու մէջ գրչի շատ սխալներ կան. ուստի մէկ-երկու տարբերակ պէտք է մեզ շփոթեցնէ: Պարզ օրինակ մը տալու համար յիշենք, որ Չալըխեան-Այտընեան (էջ 145) ունի՝ առ յիշատակէ, ինչ որ Զոհ-

րապեան Աստուածաշունչի մէջ կը գտնենք՝ առ ի յիշատակէ:

Այստեղ կ'ուզեմ նշել նաեւ՝ առօրինակ բացառականի կրկին իմաստով (պատճառ եւ նպատակ արտայայտող) գործածութեան տարբերութիւնը: Առաջինին համար առ նախդիրը աւելադրութիւն է, վերջինին համար՝ անհրաժեշտ:

Վերը յիշեցինք վիճելի նախադասութիւն մը՝ «Զայս արասցիք առ իմոյ յիշատակի» (Ղուկ. ԻԲ 19): Կայ ուրիշ մըն ալ՝ «Առ ամօթոյ ձերոյ ասեմ» (Ա. Կոր. 2 5): Երկուքն ալ նպատակ կ'արտայայտեն եւ սեռական հոլով կը թուին:

Ես պիտի ուզէի Առ ամօթոյ ձերոյ հասկնալ՝ որպէս բացառական հոլով, ուր ձայնաւորի առջեւ գործածուած է առ (փխնկ. առ ի) եւ ձերոյ՝ փխնկ. ձերմէ կանոնաւոր ձեւին:

Նոյնը պիտի ըսէի առաջին նախադասութեան համար ալ՝ միայն փոքր սրբագրութիւն մը ընելով՝ Առ իմոյ յիշատակէ (անշուշտ կանոնաւոր ձեւը պիտի ըլլար՝ առ իմմէ յիշատակէ):

2) Առ ի+հայցական նոյնպէս նպատակ կ'արտայայտէ:

Օրինակներ՝ Առ ի դարման, առ ի պէտս, առ ի խրատել, առ ի բժշկել, եւն. (դարմանումի համար կամ իբր դարման, բժշկելու համար, որպէսզի բժշկէ կամ բժշկեն, եւն.):

Նորէն քերականներու քով անորոշութիւն կայ՝ ա՞ռ, թէ՛ առ ի:

Չալըխեան-Այտընեան (էջ 133), առանց մասնաւոր կանոն յիշելու, կը գործածէ միայն՝ առ ի+հայցականով օրինակներ (թէ՛ գոյականով, թէ՛ անորոշ դերբայով):

Գարագաշեան (էջ 163) կը դնէ անո-

րոշ՝ առ կամ առ ի. եւ կը գործածէ միայն անորոշ դերբայի հետ:

Աբրահամեան (էջ 232) նոյնպէս անորոշ է՝ առ կամ առ ի. բայց կը գործածէ թէ՛ գոյականով, թէ՛ անորոշ դերբայով:

Մինասեան (էջ 15) գոյականի համար կը դնէ՝ առ, իսկ անորոշ դերբայի համար՝ առ ի:

Այս նիւթի մէջ ալ իմ քննութիւններու արդիւնքը յստակ է:

1) Առ ի+հայցական կը գործածուի թէ՛ գոյականի, թէ՛ անորոշ դերբայի հետ հաւասարապէս: Օրինակներ՝

Գոյականով՝ (Արեգակն) «ի խաւար դառնայ առ ի յանդիմանութիւն եւ յամօթ իւրոցն պաշտօնէից» (Եզնիկ, 15), «Զայլոց չարութիւն առ ի մեր շահ արկ ի կիր» (Ոսկեբ. Մատթ. Գ. Հտ. 99):

Անորոշ դերբայով՝ «Զի քեզ երկիւղ արկանելով առնիցէ պիտանացու առ ի յաճախել զպտուղ արդարութեան» (Ոսկեբ. Մատթ. 159), «Զանձն ... ի պատրաստութեան ունէր ... առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ» (Փաւ. Բուզ. 13):

2) Միայն ձայնաւորով սկսող բառերու առջեւ՝ ի նախդիրը կը կորսուի, կամ երբեմն ալ կը կրկնուի, այսինքն՝ ի+յ+ձայնաւորով սկսող բառը:

Օրինակներ՝ «Ոչ առ ուտել եւ ծախել, այլ առ ի զտել եւ սրբել» (Ոսկեբ. Ես. 44):

Կրկին նախդիրով՝ «Կապեցէք զայդ ի խրճուեստ առ ի յայրել» (Մտթ. ԺԳ 30):

3) Այստեղ ալ առ նախդիրը աւելադրութիւն է, որովհետեւ ի նախդիրը առանձին արդէն նոյն իմաստը կու տայ. Առ ի յանդիմանութիւն, կամ միայն՝ ի յանդիմանութիւն:

Պէտք է ըսել, որ Մինասեանի տուած որոշ օրինակներ շատ չեն յարմարիր այստեղ: Առաջինը՝ «Մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է» (Մարմնի կրթութիւնը քիչ բանի համար օգտակար է) նպատակ ցոյց չի տար, այլ բանի մը կապակցութիւնը կ'արտայայտէ: Անոր համար ալ միայն առ նախդիրը կ'առնէ:

Երկրորդը՝ «Եղիցի ամենայն մարդ արագ առ ի լսել եւ ծանր առ ի խօսել» (Ամէն մարդ լսելու մէջ արագ եւ խօսելու մէջ ծանր թող ըլլայ) նոյնպէս խիստ առումով նպատակ չ'արտայայտեր, այլ անակախ լրացուցիչ է: Յարմար օրինակն է երրորդը՝ «Ընկեցին զմարմինս նոցա առ ի կեր լինել շանց» (շուններուն կեր ըլլալու համար կամ՝ որպէս զի կեր ըլլան շուններուն): Նախորդ օրինակներուն մէջ չկայ այդ նպատակը՝ «որպէսզի...»:

Հետաքրքրական է, որ ձայնաւորով սկսող բայի պարագային՝ առ+անորոշական՝ Առ ատել (ատելեն, ատելուն պատճառով) եւ առ+հայցական՝ առ ուտել (ուտելու համար, որպէս զի ուտէ), մին պատճառ արտայայտող, միւսը՝ նպատակ, իրենց ձեւով կը նոյնանան: Բայց առաջինը՝ ունի միայն առ նախդիրը, որ նաեւ անհրաժեշտ է, իսկ երկրորդը իրականին ունի առ ի ի նախդիրները, որ ձայնաւորի առջեւ միայն կ'ըլլայ՝ առ: Դարձեալ՝ այդ վերջինի առ-ը աւելադրութիւն է եւ բաղաձայնով սկսող բայերու առջեւ կրնայ նաեւ զեղչուիլ:

Է) Ընդհանրապէս կ'ըսուի, որ առ+հայցական՝ շարժում կ'արտայայտէ դէպի անձ կամ կենդանի էակ. ինչպէս՝ Երթամ առ բարեկամ իմ, Եկին առ մեզ, Երթ առ մըջիւնն, եւն.:

Իմ կարծիքով, սակայն, կարեւորը կենդանի կամ ոչ կենդանի էակը չէ, այլ

շարժումին իմաստի նրբութիւնը, այսինքն՝ շարժումը դէպի բանի մը «քով» կ'երթայ, թէ բանի մը «մէջ»: Օրինակ՝ երբ ըսեմ՝ կ'երթամ քաղաք, տուն, պարտէզ, եւն., կը հասկցուի, որ կ'երթամ քաղաքին, տան, պարտէզին «մէջ». իսկ երբ ըսեմ՝ կ'երթամ բարեկամիս, կամ կ'երթամ շանս քով, սեղանին քով, ժայռին քով, պարզ է, թէ կ'երթամ «քով»ը, ոչ թէ «մէջ»ը:

Արդ, «մէջ» իմաստով կը գործածուի՝ ի նախդիրը, իսկ «քով» իմաստով՝ առ նախդիրը՝ ըլլա՛յ կենդանի էակ, ըլլա՛յ առարկայ: Այսպէս՝ երթամ ի քաղաք, ի տուն, ի պարտէզ, եւն., բայց՝ երթամ առ բարեկամ իմ, առ շուն իմ, առ սեղանն, առ վէմն:

Ինչպէս դադարում արտայայտող բայերու հետ առ նախդիրը թէ՛ կենդանի էակի, թէ՛ առարկայի հետ անխտիր կը գործածուի, նոյնը կ'արժէ նաեւ շարժում արտայայտող բայերու համար:

Մինասեան (էջ 13) կ'ըսէ, թէ միայն երկու տեղ Աստուածաշունչին մէջ գտած է առ նախդիրը առարկայի հետ գործածուած (անշուշտ որպէս շարժում) եւ կը յիշէ՝ «Մերձենալ առ սեղանն» (Բ Մակ. ԺԴ 3) եւ «Մերձեցաւ ոսկր առ ոսկր» Եզեկ. Լէ 7):

Օգտագործելով Թադէոս վրդ. Աստուածատուրեանի համաբարբառը՝ «Համաբարբառ հին եւ նոր Կտակարանաց» տպ. Երուսաղէմ, 1895՝ միայն «սեղան» բառը Աստուածաշունչին մէջ գտայ ութ տեղ գործածուած առ նախդիրով (որպէս շարժում), մատուցանեմ, մատչիմ եւ ելանեմ բայերու հետ. այսինքն՝ Ղեւ. Ա 15, Բ 8, Թ 7-8, ԻԱ 25, Թիւ. Ե 25, Ա Թագ. Բ 28, Բ Մն. ԻԹ 21:

Այս տեղիքներէն միայն մէկը կ'ուզեմ յառաջ բերել, որովհետեւ հոն յստակ

կը տեսնուի առ եւ ի նախդիրներուն տուած իմաստի տարբերութիւնը: «Քահանայն ... դիցէ զգոհն առաջի Տեսուն եւ մատուցէ առ սեղանն (սեղանին քով) եւ առցէ բռամբ քահանայն ի զոհէ ... եւ հանցէ զայն ի սեղանն (սեղանին վրայ)» (Թիւ. Ե 25):

(Ծանօթ է, որ ի նախդիրը ոչ միայն մէջ, այլ երբեմն նաեւ վրայ պէտք է թարգմանենք՝ ըստ իրեն հետ գործածուած առարկային):

Աւելցնեմ նաեւ, որ Մինասեանի յառաջ բերած տեղիքն ալ կը պակսի Համաբարբառին մէջ, ինչ որ ցոյց կու տայ, թէ մեր յիշածէն աւելի օրինակներ ալ կան այնտեղ:

Հետաքրքրութեան համար յիշեմ, որ «սեղան» բառը Աստուածաշունչին մէջ (ըստ յիշուած Համաբարբառին) ի նախդիրով գործածուած է 1 անգամ մատչիմ, 1 անգամ ելանեմ, 1 անգամ փախչիմ (=ապաւինիմ) եւ 6 անգամ մերձենամ բայի հետ:

Մինասեան նոյն տեղը կ'ըսէ նաեւ, որ անձերու համար ալ երբեմն ի նախդիրը կը գործածուի: Անշուշտ Մինասեան նկատի ունի մերձենալ բայը: Բայց պէտք է գիտնալ, որ այստեղ իմաստի տարբերութիւն կայ. մերձենալ+առ՝ կը նշանակէ՝ մօտենալ, իսկ մերձենալ+ի՝ կը նշանակէ՝ դպչիլ:

II. Ներգոյականը՝ իբր ինքնուրոյն հոլով

Հ. Գաբրիէլ Աւետիքեան 1815-ին հրատարակած իր «Քերականութիւն հայկական» գործին մէջ մերժած է իբր ինքնուրոյն հոլով ճանչնալ, նախապէս իբրեւ այդպիսի ընդունուած, պատմական, պարառական, ներգոյական եւ կոչական հոլովները՝ առարկելով, որ անոնք հոլովի յատուկ վերջաւորութիւն չունին, այլ

միայն ուրիշ հոլովներու առջեւ նախդիր մը դնելով կը կազմուին:

Իրեն հետեւելով յաջորդ քերականները՝ քիչ բացառութեամբ, նոյնպէս մերժեցին այդ չորսը իբր ինքնուրոյն հոլով: Նոյնիսկ Չալըխեան-Այտընեան Քերականութիւնը, որ չորսն ալ իբր հոլով կը յիշէ եւ կը գործածէ, էջ 10, իջատակի ծանօթութեան մէջ կը գրէ. «Ճիշտ խօսելով՝ պատմական, Պարառական, Ներգոյական եւ կոչական հոլովները զատ հոլով չեն», այլ միւս հոլովներու առջեւ նախդիրներ աւելցնելով կը կազմուին:

Իմ կարծիքով, Աւետիքեանի տեսութիւնը կ'արժէ պատմականի, պարառականի եւ կոչականի պարագային, բայց ոչ ներգոյականին:

Յօդուածիս առաջին մասերուն մէջ տեսանք ներգոյականի կարեւոր դերը առ նախդիրի գործածութեան մէջ եւ մանաւանդ անոր կազմութեան բազմազան ձեւերը:

Այստեղ կ'ուզենք ցոյց տալ, որ ներգոյականը ունի նաեւ հոլովական յատուկ վերջաւորութիւն:

1) Յայտնի է, որ ՈԱ հոլովումը ունի ներգոյականի յատուկ իր -ոջ ձեւը, ինչպէս՝ յայգւոջ, ի տեղւոջ, ի կղզւոջ, եւն.:

Վերը շեշտեցինք, թէ այգւոջ, տեղւոջ, եւն. չէ՛ կարելի տրական համարիլ. անոնք երբէք իբր տրական չեն գործածուիր, այլ յատուկ են ներգոյականի:

2) Ո հոլովումը թէեւ ի+հայցականով կը կազմէ ներգոյականը, բայց (չգոհանալով այդ ձեւէն) անոր կողքին ստեղծած է նաեւ յատուկ ներգոյական մը՝ ի սեղանի, ի մարմնի, ի բերանի, եւն. փոխանակ՝ ի սեղան, ի մարմին, ի բերան, եւն. ձեւերուն: Այստեղ նոյնպէս, սեղանի, մարմնի, բերանի, եւն. ձեւերը տրա-

կան չեն, այլ յատուկ են միայն ներգոյականի:

3) Դարձեալ՝ նոյն Ո հոլովումի որոշ բառեր, ինչպէս՝ նոր, հին, վերին, ներքին, եւն., իրենց ի+հայցական ձեւին հետ, ունին նաեւ ներգոյականի յատուկ ուրիշ վերջաւորութիւն մը՝ -ում, ինչպէս՝ ի նորում, ի հնում, ի վերում, եւն.:

Նորէն՝ սխալ է ըսել, որ նորում, հնում, եւն. ձեւերը տրական հոլով են: «Նորոյ երկրի ... սպասեմք» (Բ Պետ. Գ 13), ոչ՝ նորում երկրի. «Ընդ հնոյն (տրկ.) չմիաբանի կապերտն, որ ի նորոյն» (Ղուկ. Ե 36), եւն.: Չկան առանձին «նորումն», «հնումն»՝ իբր տրական, բայց կան «ի նորումն», «ի հնումն»՝ իբր ներգոյական:

Ասով չեմ ժխտեր, որ կան ուրիշ բառեր, ինչպէս՝ առաջին, վերջին, եւն., որ տրականի մէջ կ'ըլլան՝ առաջնում, վերջնում, եւն.:

4) Երբ Ո հոլովումի գոյականներ ստացական ածականի հետ գործածուին, ներգոյականի մէջ ձեւեր կը կազմեն, որ ոչ տրական, ոչ ալ հայցական կրնան ըլլալ: օրինակ, «Նա նստցի յաթոռ իմում» (Գ Թագ. Ա 24), «Նստաւ յաթոռ իւրում» (Գ Թագ. Ա 30) եւ նոյնիսկ անեզական գոյականի հետ՝ «Նստեալ ի կառս իւրում» (Գործ. Ը 28): Ինչ հոլով է յաթոռ իմում, ի կառս իւրում, եւն. ի+տրական, թէ՞ ի+հայցական: Ո՛չ մէկը, ոչ ալ միւսը, այլ միայն՝ ներգոյական. որովհետեւ այդ գոյական-ածականի վերջաւորութիւնը յատուկ է միայն ներգոյականի:

Ուրեմն, նկատի առնելով 1) վերոյիշեալ չորս կէտերու մէջ ներկայացուած ներգոյականի յատուկ վերջաւորութիւնները, 2) ներգոյականի կազմութեան բազմազան ձեւերը (ինչպէս յիշեցինք նախորդ էջերուն մէջ) եւ 3) վերջապէս,

անոր քերականական կարեւոր դերը՝ պէտք է ընդունինք, որ ներգոյականը ուրոյն անկախ հոլով է:

Այս սահմանումը գործնական տեսակէտէ ալ ունի իր օգտակարութիւնը՝ դերացնելով քերականական բացատրութիւնները, ինչպէս տեսանք վերը, առաջին մասին Ա. եւ Բ. կէտերուն մէջ, ուր դրինք պարզապէս՝ առօրեայական, փոխանակ՝ նախապէս գործածուած երբեմն տրականով, երբեմն հայցականով բարդ մեկնութիւններուն:

III. «Առ» նախդիրի գործածութեան ընդհանուր պատկերը

Առ նախդիրը կը գործածուի հայցական, բացառական, գործիական եւ անորոշական հոլովներու հետ:

Բնական է, ինչ որ ուրիշներ տրական կամ հայցական կը համարէին, բայց մենք ցոյց տուինք, որ ներգոյական է, պիտի չենք կայացնենք այլեւս որպէս տրական եւ հայցական, այլ միայն՝ որպէս ներգոյական:

Ա) Առ+հայցական հոլով

Առ+հայցական՝ կը գործածուի թէ՛ եզակի, թէ՛ յոգնակի գոյականի կամ դերանունի հետ, հետեւեալ բազմազան իմաստներով:

1) Կ'արտայայտէ շարժում՝ ընդհանրապէս դէպի մարդ կամ անասուն, բայց նաեւ դէպի առարկայ, եթէ շարժումը կը կատարուի դէպի առարկային քով, ո՛չ թէ առարկային մէջ:

Օրինակներ՝ «Երթամ առ Հայր» Յովհ. ԺԶ 28), «Եկն առ աշակերտսն» Ղուկ. ԻԲ 45), «Մերձեցարուք առ Աստուած եւ մերձեցի առ ձեզ» (Յակ. Դ 8), «Երթ առ մեղուն եւ ուսիր զիարդ գործօն է» (Առակ. Զ 8), «Մատեալ Ահարոն առ սեղանն» (Ղեւ. Թ 8):

2) Նոյն ձեւով կը գործածուին բայեր, ինչպէս՝ առաքեմ, գրեմ (մէկու մը), տամ (յանձնել), յաղօթս կամ, կարդամ, անձկանամ, հայիմ, եւն., որ թէեւ իրական շարժում չեն արտայայտեր, բայց ուղղուած են դէպի ուրիշը:

Օրինակ՝ «Առաքեաց զծառայս իւր առ մշակսն» (Մատթ. ԻԱ 34), «Գրեցին առ Շմաւոն քահանայապետ» (Ա Մակ. ԺԵ 24), «Առ մեծամեծս եւ առ իշխանս եւ առ նախարարս ... ողջոյն» (Ագաթ. 73), «Ետ հրովարտակս առ Յովնաթան» (Ա Մակ. ԺԱ 22), «Յաղօթս կացցեն առ նա յամենայն ժամ» (Սաղմ. ՀԱ 15), «Ես առ Տէր կարդացի» (Սաղմ. ՀԶ 2), «Անձկացեալ եմ առ ձեզ ամենեսեան» (Փլյա. Ա 8), «Հայեցալ առ նա» (Սիր. ԺԱ 13):

3) Կը նշանակէ մէկու մը հանդէպ, անատմամբ:

Օրինակ՝ «Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ» (Բ Կոր. Է 4), «Երկայնամիտ լեր առ իս» (Մատթ. ԺԸ 26), «Առ իւր թագաւորն իսկ է վնասակար» (Փաւ. Բուզ. 75):

4) Մէկու մը կամ բանի մը ուղղուած կամ հայտը:

Օրինակ՝ «Առ մե՞զ ասացեր զառակդ զայդ, եթէ առ ամենեսեան» (Ղուկ. ԺԲ 41), այսինքն՝ «Մեզի՞ համար ըսիր... (ոչ թէ՛ Մեզի՞ ըսիր...): «Առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն» (Եզնիկ, 18), այսինքն՝ «Այսպիսի ճշմարիտ խօսքերու դիմաց...»:

5) Բանի մը կապակցութեամբ, վերաբերմամբ:

Օրինակ՝ «Մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է» (Ա Տիմ. Դ 8), «Առ բանն Աստուծոյ այնչափ էր հզօր» (Փաւ. Բուզ. 33), «Սէգ իսկ էր առ հանդերձս» (Ագաթ. 71):

5) Համեմատութիւն ցոյց կու տայ:

Օրինակ՝ «Այն զի՛նչ է առ այդչափ մարդիկ» (Յովհ. Զ 9), «Որչափ կաթ մի ջրոյն առ ծովն անչափ» (Ոսկեբ. Պօղ. Բ. Հտ. 550):

6) Կը նշանակէ իւրաքանչիւրին համար:

Օրինակ՝ «Տո՛ւք ինձ առ՝ այր գինդ մի յաւարէ անտի» (Դատ. Ը 24), «Երկուս գառինս տարեւորս անարատս առ օր» (Ել. ԻԹ 38), «Չորրորդ դորակի գինւոյ նուէր առ մի գառն» (Ել. ԻԹ 40), «Կացուցանէր քահանայս առ սեղան սեղան» (Ագաթ. 437):

7) Ժամանակի հատուած մը կը սահմանէ, կը ճշդէ:

Օրինակ՝ «Առ ե՛րբ արարից աղօթս վասն քո ... եւ նա ասէ՛՝ առ վաղիւ (Ել. Ը 9), «Դու առ այժմ երթ» (Գործ. ԻԴ 25), «Առ ժամանակ մի հաւատան» (Ղուկ. Ը 13):

8) Կը գործածուի ունիմ (բռնել), համարիմ բայերու հետ:

Օրինակ՝ «Ձանձինս առ իմաստունս ունէին, յիմարեցան» (Հռոմ. Ա 22), «Ձկուռս ոչ կալայ երբէք առ աստուածս» (Ագաթ. 65), «Առ ոչինչ զցաւսն համարեցալ» (Բ Մակ. Է 12):

9) Ոճեր կը կազմէ. Առ ոտն կամ առ աթուր կոխել, առ երեսս ուրանալ, առ հասարակ, առ ժամայն, առ փոքր փոքր, առ ոտն ոտն, գունդ առ գունդ, տուն առ տուն, բան առ բան, եւն.:

10) Առ ի+հայցական կ'արտայայտէ անպատակ եւ կը գործածուի թէ՛ գոյականի եւ թէ՛ անորոշ դերբայի հետ:

Բայց Առ նախդիրը այստեղ աւելադրութիւն է եւ կրնայ նաեւ զեղչուելի:

Հակառակ այդ իրողութեան, ձայնաւորով սկսող բառի առջեւ ընդհանրապէս

ի նախդիրը կ'իյնայ եւ միայն առ կը մնայ կամ կը դրուի կրկին ի (ի+յ):

Օրինակ Գոյակաւով՝ Արեգակն «ի խաւար դառնայ առ ի յանդիմանութիւն եւ յամօթ իւրոցն պաշտօնէից» (Եզնիկ, 15), «Ձայլոց չարութիւն առ ի մեր շահարկ ի կիր» (Ոսկեբ. Մատթ. Գ. Հտ. 99):

Անորոշ դերբայով՝ «Ձի քեզ երկիւղ արկանելով առնիցէ պիտանացու առ ի յաճախել զպտուղ արդարութեան» (Ոսկեբ. Մատթ. 159), «Ձանձն ... ի պատրաստութեան ունէր ... առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ» (Փաւ. Բուզ. 13):

Ձայնաւորի առջեւ՝ «Ոչ առ ուտել եւ ծախել, այլ առ ի զտել եւ սրբել» (Ոսկեբ. Ես. 44):

Կրկին նախդիր՝ «Կապեցէք զայդ ի խրճուեսն առ ի յայրել» (Մատթ. ԺԳ 30):

11) Առ ի+հայցական բոլորովին նախորդին պէս կը գործածուի, որպէս ածականի լրացուցիչ:

Օրինակ՝ «Քար ծանր է եւ աւազ դժուարին առ ի բառնալ (Առակ. ԻԷ 3), «Եղիցի ամենայն մարդ արագ առ ի լսել եւ ծանր առ ի խօսել» (Յակ. Ա 19), «Դիւրին առ ուսումն» (Ոսկեբ. Պօղ. Ա. Հտ. 818), «Դժուարին առ ուղղել» (Ոսկեբ. Պօղ. Ա. Հտ. 868):

12) Երբ ի եւ զ նախդիրները իրարու հանդիպին, ի նախդիրին առջեւ սովորաբար (բայց ոչ անպայման) առ նախդիրն ալ կ'աւելնայ:

Օրինակ՝ (ի+զ) «Ես առ ի զսոյն ասելոյ երբեք ոչ դադարեցից» (Ոսկեբ. Պօղ. Բ. Հտ. 461), փոխանակ՝ Ես ի զսոյն ասելոյ...:

Բարդ ածականի մը հետ՝ (զ+ի) «Ձառ ի վերուստ եկեալ հարուածսն» (Ոսկեբ. Մատթ. Գ. Հտ. 350), փխնկ. Ձի վերուստ եկեալ հարուածսն, կամ յետա-

դաս ածականով՝ «Զփառս զառ ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք» (Յովհ. Ե 44):

Բ) Առ+բացառական հոլով

1) Առ+նախդիրով բացառական կը գործածուի թէ՛ գոյականի եւ թէ՛ անորոշ դերբայի համար հաւասարապէս եւ նպատակ կ'արտայայտէ:

Միայն ձայնաւորով սկսող բառերու առջեւ ի նախդիրը կը կորսուի:

Օրինակներ Գոյականով՝ «Անդ եղին ... առ ի յիշատակէ զսուրան քարեղէնս» (Յես. ԻԴ 31), «Շատ է գիտել մեզ առ ի փրկութեան մերմէ զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին Սուրբ, թէ մի է» (Կիւրեղ Ե., Կոչումն, 356):

Անորոշ դերբայով՝ «Կոչի (Յիսուս) ե՛ւ ճանապարհ, առ ի զմոլորութիւնն հալածելոյ, ե՛ւ ճշմարտութիւնն, առ ի զստութիւնն եղծանելոյ, ե՛ւ կեանք, առ ի զմահն քակելոյ» (Սեբեր. 9):

Ձայնատրէ առաջ՝ «Մի՛ առ ականէ ծառայել իբրեւ մարդահաճոյք» (Եփես. Զ 6), «Զիոց սանձս ի բերան դնեմք, առ անսալոյ նոցա մեզ» (Յակ. Գ 3):

2) Առ+նախդիրով բացառական կը նշանակէ (մէկու մը) կողմէ կամ քովէն եւ կրնայ գործածուիլ թէ՛ եզակի եւ թէ՛ յոգեակի:

Բայց առ նախդիրը այստեղ աւելադրութիւն է, քանի պարզ բացառականն ալ գրեթէ նոյն իմաստը կու տայ:

Օրինակ (Կողմէ)՝ «Նա խօսեցի առ ի քէն ընդ ժողովրդեանն» (Ել. Դ 26), «Անհնարինք առ ի մարդկանէ հնարաւորք են Աստուծոյ» (Ղուկ. ԺԸ 27):

(Բովմէ)՝ «Առ ի մէնջ ելին, բայց ոչ էին ի մէնջ» (Ա. Յովհ. Բ 19), «Մինչ չեւ եկեալ էին ոմանք առ ի Յակոբայ» (Գաղ. Բ 12):

Իբր աւելադրութիւն՝ «Բոյր է իմ առ ի

հօրէ եւ ոչ առ ի մօրէ» (Եփրեմ, Ա 55) եւ «Բոյր է իմ ի հօրէ եւ ոչ ի մօրէ» (Ծն. Ի 11), կամ երկու ձեւերը միասին՝

«Եղիցի հովանի տուրնջեան առ ի սօթոյ եւ ծածկոյթ՝ ի խստութենէ եւ յանձրեւաց» (Ոսկեբ. Ես. 44):

3) Առ+նախդիրով բացառական կ'արտայայտէ պատճառ եւ կը գործածուի թէ՛ եզակի, թէ՛ յոգեակի, թէ՛ գոյականով, թէ՛ անորոշ դերբայով:

Այստեղ ալ առ նախդիրը աւելադրութիւն է, հակառակ ասոր ձայնաւորով սկսող բառին առջեւ ի նախդիրը կը կորսուի եւ միայն առ կը մնայ:

Օրինակ Գոյականով՝ «Առ ի չգոյէ հիւթոյ ... չորացաւ» (Մատթ. ԺԳ 5, Ղուկ. Ը 6):

Յոգեակի՝ «Ոչ առ ի փափկութեանց եւ յուլութեանց կորոյս զլաւութիւնն» (Ոսկեբ. Մատթ. 558), Անորոշ դերբայով՝ «Բազում չարիք յաշխարհ մտին առ ի սիրոյն ցամաքելոյ» (Ոսկեբ. Մատթ. 256):

Ձայնատրի առջեւ՝ «Առ ոչ ուղիղ հայելոյ կարծեցին եթէ...» (Եզնիկ, 67), «Ոչ առ արդարութեանց մերոց արկանեմք զգութս մեր առաջի քո, այլ վասն բազում գթութեան քո, Տէր» (Դան, Թ 18):

Իբր աւելադրութիւն՝ «Ոչ եթէ առ ի հարկէ տանջէ զնոսա, այլ կամօք» (Ոսկեբ. Պող. Ա. Հտ. 679) եւ «Մի՛ բարիքդ քո ի հարկէ լինիցին, այլ կամաւ» (Փիլ. 14). կամ՝ «Առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ...» (Եզնիկ, 67) եւ «Մեզ հարկ եղեւ ի սիրոյ բարեկամաց եւ յոչ ուղիղ հայելոյ ընդդիմակացն ... մխել ի խնդիր ճառիցս» (Եզնիկ, 22):

Վերջին երկու թիւերը (թիւ 2 եւ 3)՝ առ+նախդիրով բացառական՝ կողմէ, քովէն իմաստով եւ նոյնը՝ պատճառ նշանակութեամբ, թէ՛ գործածութեան ձեւով եւ թէ՛

իմաստով կապուած են իրարու, քանի մէկը բանի մը ծագման վայրը եւ միւսը անոր պատճառը կ'արտայայտէ:

Գ) Առ+գործիական հոլով

1) Առ+գործիական կը նշանակէ՝

ա) Բանի մը շրջակայքը, քովերը, մօտերը, (գետի, ճամբու) երկայնքին:

Օրինակ՝ «Մոլորեալ շրջէր ... առ ջրհորովն երզման» (Ծն. ԻԱ 14), «Էր բնակեալ առ կաղնեաւն Մամբրէի» (Ծն. ԺԴ 13), «Բնակեալ էաք առ եզերք Յորդանանու» (Յես. Է 7), «Առ ճանապարհաւն սերմանեցաւ» (Մատթ. ԺԳ 19):

բ) Բանի մը քով կամ հետ որպէս յաւելեալ բան մը:

Օրինակ՝ «Ձէ պարտ առ մանանայիւն այլ փափկութիւն խնդրել» (Ոսկեբ. Պող. Ա. Հատ. 571), «Եթէ առցես կանայս առ դստերովք իմովք ... Աստուած լիցի վկայ ընդ իս եւ ընդ քեզ» (Ծն. ԼԱ 50):

2) Առ+գործիական միայն ընդհանուր կերպով ցոյց կու տայ մէկու մը կամ բանի մը ժամանակը (ժամանակները):

Օրինակ՝ «Բազում բորոտք էին յիւրայելի առ Եղիսէիւ մարգարէի» (Ղուկ. Դ 27), «Որպէս եւ տեսեալ էր իւր առ հնօքն թագաւորօք» (Փաւ. Բուզ. 158), «Ձոր զգեանոյր առ կենդանութեամբ առն իւրոյ» (Յուդ. Ժ 3):

3) Առ+գործիական կ'արտայայտէ համեմատութիւն (քով, համեմատ):

Օրինակ՝ «Զինչ է յարդ առ ցորենով» (Երեմ. ԻԳ 28), «Եւ ոչ զմեծ վաստակ նորա համարեցայ ինչ առ սիրով եւ առ ահիւ դիցն» (Ազաթ. 78):

Յայտնի է, որ առ + գործիականի վերոյիշեալ բոլոր նշանակութիւնները կապ ունին իրարու հետ, որովհետեւ նոյն ձեւով, միայն ընդհանուր կերպով, կամ

տեղ, կամ ժամանակ կը յայտնեն:

Դ) Առ+ներգոյական հոլով

1) Առ+անախդիր ներգոյական դադարում արտայայտող բայերու հետ տեղական քով իմաստը կու տայ:

Օրինակներ՝ Յոգնակի՝ «Հեղի քահանայ նստէր աթոռով առ սեամս տաճարին» (Ա. Թագ. Ա 9), «Թաղեցին զնա առ հարս իւր» (Դ. Թագ. ԺԵ 7), «Թռչունք առ իւրեանց նմանիսն դադարեն» (Սիր. ԻԷ 7):

Եզակի՝ «Պետրոս առ դրանն կայ» (Գործ. ԺԲ 14), «Տապար առ արմին ծառոց դնի» (Մատթ. Գ 10), «Առ նմա ագան այն օր» (Յովհ. Ա 39):

Ո հոլովում՝ «Եկաց առ սեղանն» (Յայտ. Ը 3), «Եդ (1) զնա առ որմ հաստաեալ երկաթով» (Իմաստ. ԺԳ 15), «Երթեալ նստէր մօտ առ դին» (Փաւ. Բուզ. 102):

Ներգոյականի երկրորդ ձեւով՝ «Նստաւ առ ջրհորի միում» (Ել. Բ 15), «Առիւծն կայր առ մարմնին» (Գ. Թագ. ԺԳ 24):

Ու հոլովում՝ «Բնակեցաւ առ կաղնուղն Մամբրէի» (Ծն. ԺԳ 18), «Տնկեն զնա առ ընտանի թզենուջ» (Բարսեղ, Վեց. 98):

Ես՝ (անձնական դերանուն)՝ «Կան առ իս» (Մատթ. ԺԵ 32):

2) Առ+անախդիր ներգոյական՝ ընդհանրապէս հոգեկան վիճակ, կիրք, զգացում, եւն. արտայայտող վերացական գոյականներու հետ՝ գործողութեան մը պատճառը կը յայտնէ:

Օրինակներ՝ Յոգնակի՝ «Աղաղակես ջիք առ ցաւս» (Ես. ԿԵ 14), «Տէր մատնեաց զնա առ մեղս մեր» (Ես. ԾԳ 6):

Եզակի՝ «Առ վշտին ոչ բանայ զբերան իւր» (Ես. ԾԳ 7), «Ոմանք առ նա-

խանձու եւ հակառակութեան զՔրիստոս քարոզեն եւ ոմանք՝ ի սիրոյ» (Փլպ. Ա 15), «Ձանձն չկամէր (չհամարէր) արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում» (Փաւ. Բուզ. 59):

Ո հոլովում «Առ սէր քո արարի զկամս քո ի վերայ Բաբելոնի» (Եսթ. ԽԼ 14), «Առ գութ տիրասիրութեանն, զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին» (Փաւ. Բուզ. 170), «Առ սէր քո արարի զկամս քո ի վերայ Բաբելոնի» (Եսթ. ԽԼ 14), «Առ գութ տիրասիրութեաննս զոր առ բնակ տէրն իւրեանց ունէին» (Փաւ. Բուզ. 170), «Առ ատել զնոսա Տեառն եհան զնոսա կոտորել (Բ Օր. Թ 28), «Ո՞ր ի ձէնջ առ հոգալ իւրում կարիցէ յաւելուլ ի հասակ իւր կանգուն մի» (Մատթ. Զ 27):

Շատ պարզ է, որ առ+ներգոյականի յիշուած կրկին նշանակութիւնները՝ տեղ եւ պատճառ արտահայտող՝ թե՛ կառուցուածքով եւ թե՛ իմաստով կապուած են իրարու:

Մէջբերուած օրինակներուն համար օգտագործուած աղբիւրներ (Աստուածաշունչի գիրքերը հարկ չենք տեսներ դնել)

(Եզնիկ) Եզնկայ Կողբացւոյ՝ Եղծ Աղանդոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1826:

(Ագաթ.) Ագաթանդեղոս, Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909:

(Փաւ. Բուզ.) Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

(Ոսկեբ. Մատթ.) Յովհաննու Ոսկեբերանի՝ Յաւատարանագիրն Մատթէոս, Ա. եւ Բ. Հատ. միասին, Վենետիկ, Ս. Ղազար, 1826: Գ. Հատորն ալ՝ նոյն թուականին:

(Ոսկեբ. Ես.) Յովհաննու Ոսկեբերանի՝ Մեկնութիւն Եսայեայ Մարգարէի, Վենետիկ, Ս. Ղազար, 1880:

(Ոսկեբ. Պող. Ա.) Յովհաննու Ոսկեբերանի՝ Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, Ա. Հատ., Վենետիկ, Ս. Ղազար, 1862: Բ. Հատորն ալ՝ նոյն թուականին:

(Եփրեմ) Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնք, Բ. Հատ., 1835, Դ. Հատ., 1836, Վենետիկ, Ս. Ղազար, 1862:

(Բարսեղ, Վեց.) Սրբոյն Բարսեղի ձառք վասն վեցօրեայ Արարչութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1830:

(Սեբեր.) Սեբերիանոսի Եմեսացւոյ ձառք ԺԵ., Վենետիկ, Ս. Ղազար, 1830:

(Կիւրեղ Ե. Կոչումն) Կիւրղի Երուսաղեմայ Հայրապետի՝ Կոչումն Ընծայութեան, Վիեննա, Մխիթարեան տպ. 1832:

ԵՂԻՉԷ ՊԱՏՄԻՉԸ ԵՒ ԻՐ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Լեւոն Խաչերեան

Եղիշէ պատմիչը իր ապրած ժամանակաշրջանին տեղի ունեցած Վարդանանց Հայոց մեծ պատերազմի դիւցազներգուն է, ընդ որում մասնակցի եւ ակնատեսի իսկ իւրայատկութեամբ: Կենսագրական տեղեկութիւնները յարակից վկայութիւններով՝ չափազանց սակաւ են: Աւանդաբար մատենագրական հաղորդումներով հաւաստուում է, որ Եղիշէն Հայոց Դպրապետ Մաշտոցի կրտսերագոյն աշակերտներից է եղել եւ խորենացու ուսումնակիցներից, վերջինիս հետ միասնաբար այլ ուսումնականների հետ բարձրագոյն ուսումնառական գործուղմամբ մեկնել է Աղեքսանդրիայի հռչակաւոր ակադեմիան. այստեղ է համաշխարհային քրիստոնէական գրականութեանը եւ տեսութեանը հմտացել, Եօթ Ազատ Արուեստների կրթական բովով անցել, հնագոյն քաղաքակիրթ լեզուների տիրապետել եւ գիտութիւններով ծանրաբեռն վերադարձել Հայրենիք, երբ արդէն վախճանուել էին երախտաշատ Ուսուցիչները՝ Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպ Մաշտոցը: Մեկնելով այս իրողութիւնից՝ Եղիշէի ծնունդը ենթադրուում է 410-412 թուականներին:

Հին ճառընտիրներում հաւաստուում է, որ 451 թուականին Պարսից տիրապետութեան դէմ բռնկուած Հայ ազատագրական պատերազմի ժամանակ եւ տեսող լեալ ամենայն անցիցն որ անցին ընդ զօրսն Հայոց ի Յազկերտէ Պարսից արքայէ»¹:

Հայոց պատերազմին իր մասնակցութեան մասին Եղիշէն ինքը մի շարք ան-

գամներ տարբեր առիթներով իր պատմագրութեան մէջ անդրադառնում է: Իր Ընծայականում վկայում է՝ պատուիրատուին հաշուետուութիւն ներկայացնելիս. «Արդ որովհետեւ ընկալաք զհրաման պատուիրանի յաննախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցո՛ւք ուստի արժան է սկսանել. թէպէտ եւ ոչ՝ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ: Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիւր ողբովք ճառագրեմք զբազում հարուածս՝ յորում պատահեցաք եւ մեք իսկ ակամատես լինելով»²:

Նաեւ Աւարայրեան դիւցազներգութեան բուն շարադրանքը հիւսնելիս մի շարք առիթներով պատմիչը ակնարկում եւ շեշտում է իր մասնակցութիւնը: Բնութագրելով նախապատրաստուող ճակատամարտին անմիջապէս նախորդող իրադրութիւնը Հայաստանում՝ ուժերի դասաւորութեան առումով, հայրենասիրական ճակատի մարտիկների անդրդուելի վճռականութիւնը Եղիշէն իր «աչքերով» է տեսել՝ Հայաստան աշխարհի հերոսացման նկրտումներում. «Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին եւ զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, եւ ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, եւ ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ գիւտից: Որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ եւ աշխարհս Հայոց»³:

Առաւել ակնյայտ պարզաբանումով՝ Եղիշէն խոստովանում է իր մասնակցութիւնը Պարսից Յազկերտ Բ. արքայից ար-